

## Երևանում բնակարանների գները սկսում են իրենց վերելքը

2009թ.-ի մարտին Երևան քաղաքի բոլոր համայնքներում, առաջին անգամ վերջին ամիսների ընթացքում նկատվեց բնակարանների գների դրամական վերելք: 2009թ.-ի մարտին մայրաքաղաքում բազմաբնակարան բնակելի շենքերի 1 քմ բնակելի տարածքների միջին գինը գրանցվեց 289,800 դրամ, որի դրամական ցուցանիշը 8%-ով բարձր է նախորդ ամսվա ցուցանիշից, իսկ 2008թ.-ի մարտի ցուցանիշից բարձր է 1.1%-ով: 2009թ.-ի մարտին սույն թվականի փետրվար ամսվա համեմատությամբ բնակարանների դրամական գնային ամենամեծ աճը նկատվեց Արաբկիր համայնքում՝ 13%, իսկ մինիմալ աճը հանդիպել է Դավթաշենում՝ ընդամենը 4%: Ուսումնասիրելով Երևանում բնակարանների աճման և նվազման տեղեկները 2008 և 2009 թթ.-ին՝ համեմատ, 2009թ.-ի մարտին

չենք կարող չնշել, որ 2008թ.-ի մարտի բնակարանների դրամական գնային ցուցանիշը Երևանի որոշ համայնքներում դեռ մնում է ցածր, սակայն նույնը չի կարելի ասել Կենտրոն համայնքի մասին, Կենտրոնում 2009թ.-ի մարտին բնակարանների գները 2008թ.-ի մարտի համեմատ աճել են 11%-ով: Ըստ վիճակագրական տվյալների 2009թ.-ի մարտին 2008թ.-ի մարտի համեմատ մաքսիմալ նվազումը տեղի է ունեցել Աջափնյակում՝ 5%, իսկ մինիմալ նվազումը գրանցվել է Շենգավիթում՝ 1%: Ի հարկե պետք է նշել, որ բնակարանների գների դրամային նման աճը, պայմանավորված է ամերիկյան դոլլարի փոխարժեքի բարձրացմամբ: ԱՄՆ դոլլարի արժեքի վերելքի հետևանքով, բնակարանների գները դոլլարով բացահայտ անկում են կատարել: Օրինակ կենտրոնում բնակարանների գները նվազել են 11%-ով: Մաքսիմալ նվազումը

Համայնքներ	2008թ. մարտ	2009թ. մարտ	2009թ. փետ
Կենտրոն	466,000	515,600	482,300
Արաբկիր	395,600	388,400	344,400
Զեյթուն	296,900	299,100	270,200
Նոր-Նորք	263,200	258,600	241,200
Շենգավիթ	266,900	264,700	237,300
Դավթաշեն	275,000	279,200	268,400
Մալաթիա	255,200	245,100	230,600

2009թ.-ի մարտին փետրվարի համեմատ եղել է Դավթաշենում՝ 13%, իսկ մինիմալը հանդիպել է Արաբկիրում՝ 6%: Իսկ 2008թ. մարտի համեմատ, 2009թ.-ի մարտին բնակարանների գների ամենաշատ նվազումը նկատվել է Աջափնյակում՝ 20%, իսկ ամենաքիչը գրանցվել է Կենտրոն համայնքում՝ 7%:

## Վարձակալության հատուկ առաջարկներ Պիկ Ռիեյթի կողմից



▲ Արարատի գեղեցիկ տեսարանով շքեղ երկհարկանի առանձնատուն՝ Վահագնի Թաղամասում՝ Երևանի ամենաբարեկեցիկ և ապահով մասերից մեկում: Առանձնատունն ունի 200 քմ ընդհանուր մակերես, ամբողջովին կահավորված և վերանորոգված է ըստ եվրոպական ստանդարտների:



▲ Ընդարձակ և հարմարավետ գրասենյակային տարածք 100 քմ ընդհանուր մակերեսով, որը գտնվում է խոշոր գործարար կենտրոնների անմիջական հարևանությամբ: Գրասենյակը բաղկացած է երեք ընդարձակ սենյակներից, առանձին պահեստի սենյակից, ինչպես նաև կահավորված խոհանոցից, որտեղ դուք կարող եք վայելել ձեր ընդմիջումները:



▲ Երեքսենյականոց, 140 քմ ընդհանուր մակերեսով յուրահատուկ բնակարան Հյուսիսային Պողոտայում: Բնակարանը ամբողջովին վերանորոգված և կահավորված է, ունի կենտրոնական օդափոխման և ջեռուցման համակարգեր: Ձեր տրամադրության տակ կլինի անվտանգ ստորգետնյա ավտոկայանատեղի:

